Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
հունիսի 29-ի նիստի N 28
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու մարմինը	Համակատարող մարմինը	Կատարման ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Հղումը
1.	«Քաղաքացիական պաշտպանության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների փաթեթի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Սույն օրենքներում նախատեսվող փոփոխությունները ու լրացումները կիստակեցնեն քաղաքացիական պաշտպանության բնագավառում պետական, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների գործառույթները քաղաքացիական պաշտպանության բնագավառում, **այդ թվում՝ պատվիրակված և պարտադիր լիազորությունները, ինչպես նաև սույն ծրագրով նախատեսված նախագծերի օրենսդրական հղման ապահովումը:**	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	2018 թ. հունիս	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ Նախագահի 2011 թ. դեկտեմբերի 27-ի ՆԿ-229-Ն կարգադրության հավելվածի (այսուհետ՝ հայեցակարգ) 23-րդ կետի 3-րդ ենթակետ

2.	«ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի «ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման կարգին հավանություն տալու մասին» թիվ 12 արձանագրային որոշումը կդառնա նորմատիվաիրավական փաստաթուղթ և հնարավորություն կընձեռնվի ՀՀ պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացնելու ենթակա քաղաքացիական պաշտպանության համակարգերի քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատում:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Ծրագրի 1-ին կետով սահմանված ՀՀ օրենքների փաթեթի ընդունումից հետո 6 ամսյա ժամկետում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:	հայեցակարգի 23-րդ կետի 9-րդ և 13-րդ ենթակետեր
3.	«Քաղաքացիական պաշտպանության խմբին դասվող տարածքների և կազմակերպությունների ցանկը՝ ըստ վտանգավորության աստիճանի, սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	«Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի բ. ենթակետում որպես քաղաքացիական պաշտպանության սկզբունք նշվում է. «Քաղաքացիական պաշտպանության իրականացումը՝ տարբերակված ըստ ռազմավարական, տարիքային, տարածքային, արտադրական-տարածքային առանձնահատկությունների»: **Սակայն սույն օրենքով ՀՀ կառավարությանը տրված չէ լիազորություն այդ** կազմակերպությունների ցանկը հաստատելու: Ծրագրի 1-ին կետով սահմանված ՀՀ օրենքների փոփոխությունից հետո սույն նախագծով կսահմանվի այդ ցանկը:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Ծրագրի 1-ին կետով սահմանված ՀՀ օրենքների փաթեթի ընդունումից հետո 3 ամսյա ժամկետում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:	հայեցակարգի 33-րդ կետ և 61-րդ կետի 4-րդ ենթակետ

4.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի N 592 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Սույն որոշման ընդունմամբ կհստակեցվեն պաշտպանական կառույցների մշտադիտարկման կազմակերպման, ստորգետնյա տարածքներում գործող օբյեկտների օգտագործման, տիպային պաշտպանական կառույցների նախագծման, պատերազմի ժամանակ արագ կառուցվող ապաստարանների և պարզագույն թաքստոցների կառուցման ընթացքում առաջացող իրավահարաբերությունները:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ կառավարության առընթեր (այսուհետ՝ ԿԱ) քաղաքաշինության պետական կոմիտե ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն	Ծրագրի 1-ին կետով սահմանված ՀՀ օրենքների փաթեթի ընդունումից հետո 6 ամսյա ժամկետում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:	հայեցակարգի 23-րդ կետի 18-րդ, 19-րդ ենթակետեր, 51-րդ կետ
5.	**Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու և կառավարության № 679 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**	Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» N 679 որոշումը չի ապահովում բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովման ժամանակակից պահանջները: **Ներկա որոշումը ուժը կորցրած ճանաչելով և նոր կարգի ընդունումով** կկարգավորի անհատական պաշտպանության միջոցներով ապահովման ենթակա բնակչության խմբերի հերթականությունը, դրանց ձեռքբերման, ներկրման, կուտակման և օգտագործման կարգը՝ առաջնահերթությունը տալով ՀԱԷԿ-ի, քիմիական օբյեկտների վտանգավոր տարածքների բնակչության ու փրկարարական ուժերի ապահովմանը:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ ֆինանսների նախարարություն	Ծրագրի 1-ին կետով սահմանված ՀՀ օրենքների փաթեթի ընդունումից հետո 6 ամսյա ժամկետում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:	հայեցակարգի 22-րդ կետի 4-րդ ենթակետ, 10-րդ կետի 6-րդ ենթակետ

6.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի N 1532-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	«Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն քաղաքացիական պաշտպանության կազմավորումները մտնում են քաղաքացիական պաշտպանության ուժերի կազմում, որոնք ստեղծվում են համայնքներում, կազմակերպություններում, սակայն համայնքները և կազմակերպությունները չունեն քաղաքացիական պաշտպանության կազմավորումներին անհրաժեշտ հանդերձանքով, տեխնիկայով և գույքով ապահովելու հնարավորություն: Որոշման ընդունումը նպատակ ունի կարգավորելու նաև սահմանամերձ համայնքներում և վտանգավոր կազմակերպություններում քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, հանդերձավորման, հագեցման հարցերը:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Ծրագրի 1-ին կետով սահմանված ՀՀ օրենքների փաթեթի ընդունումից հետո 6 ամսյա ժամկետում	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:	հայեցակարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետ, 61-րդ կետի 6-րդ ենթակետ
7.	«Քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ-ում գործող քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական նորմատիվ փաստաթղթեր չկան, **օգտագործվում են ԽՍՀՄ ժամանակաշրջանի նորմերը, որոնք պարտադիր նորմ չեն համարվում ՀՀ-ի համար: Սույն ՀՀ կառավարության որոշման նախագծով քաղաքաշինության և այլ ոլորտներում կներառվի ՀՀ քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական նորմերը:**	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե	2017թ. օգոստոս	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:	հայեցակարգի 23-րդ կետի 3-րդ ենթակետ, 51-րդ կետ
8.	«Տարածքային պաշտպանության կազմակերպման և իրականացման, տարածքա-	Նշված նախագծով կարգավորվելու է տարածքային պաշտպանության կազմակերպման, իրականացման և	ՀՀ արտակարգ իրավիճակների	ՀՀ պաշտպանության նախարարություն	2017թ. **օգոստոս**	ՀՀ պետական բյուջեից լրա-	««Պաշտպանության մասին» ՀՀ

	յին պաշտպանությանն այլ պետական մարմինների ուժերի ու միջոցների ներգրավման կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	տարածքային պաշտպանության այլ պետական մարմինների ուժերի ու միջոցների ներգրավման հետ կապված հարաբերությունները:	նախարարություն	ՀՀ պետական, պետական կառավարման մարմիններ		ցուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:	օրենքի 15.1 հոդվածի 4-րդ կետը
9.	Պահեստային կառավարման կետերի ուսումնասիրություններ և առաջարկությունները ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Նշված ուսումնասիրություններով առաջարկություններ է ներկայացվելու ՀՀ կառավարությանը պահեստային կառավարման կետերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական, պետական կառավարման մարմիններ	2017թ. հուլիս	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	
10.	**Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. օգոստոսի 18** «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին թիվ 1180-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Որոշման մեջ փոփոխությունները և լրացումները կիստակեցնեն կառավարման մարմինների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների տարահանման գործառույթները:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական, պետական կառավարման մարմիններ	2018թ. **օգոստոս**	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	
11.	«Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված ապաստարանների	ՀՀ տարածքում առկա ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների ցանկի հաստատումով կկանոնակարգվի	ՀՀ արտակարգ իրավիճակ-	ՀՀ պետական, պետական կառավարման	Ծրագրի 1-ին կետով սահման-	ՀՀ պետական բյուջեից լրա-	

	ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	դրանց կարգավիճակը և կարգելվի հետագայում դրանց մասնավորեցման գործընթացները:	ների նախարարություն	մարմիններ	ված ՀՀ օրենքների փաթեթի ընդունումից հետո 6 ամսյա ժամկետում	ցուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	
12.	Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի ուսումնասիրություն՝ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ստեղծման նպատակով	Սահմանամերձ համայնքներում քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ստեղծումը կնպաստի տարաբնույթ արտակարգ իրավիճակներին արձագանքման ժամկետների կրճատմանը:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ	2017-2018թթ.	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	
13.	«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման 2018, 2019 թվականների պլանները հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Սույն նախագծերով կկանոնակարգվեն քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման միջոցառումների ծավալներն ու ներգրավվող մարմինները:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական, պետական կառավարման մարմիններ	2017թ. դեկտեմբեր 2018թ. դեկտեմբեր	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	
14.	Մարտի 1-ի քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումների (դասախոսություններ,	Նշված միջոցառումների անցկացումը կնպաստի բնակչության մոտ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման հմտությունների կատարելագործմանը և	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարու-	ՀՀ կրթության և գիտության նախարարություն Մարզպետա-	2017-2021թթ.	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի	

	սեմինարներ, վարժանքներ) անցկացում ուսումնական հաստատություններում	իրավիճակի բարդ պայմաններում վարվելակերպի կանոնների յուրացմանը	թյուն	ռաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնու-թյամբ), համայնքներ (համաձայնու-թյամբ)		պահանջվում	